օգնել գործին. իսկոյն ընտրվեցան 4 մարդիկ, որոնք պէտք է յիշէին 600 ր. բաժանէին 300 ընտրողի ծուխերի վրա, որպէս զի այս վերջինները իւրաքանչիւր տարի վճարէին իրանց միանգամից նշանակած բաժինը։ Պարգեցին և երկու ժողովարարներ, մի ժամապետ նոյնպէս և կազմվեցաւ, որի մէջ նուիրատուները պէտք է ստորագրէին իրանց անունները և նոյն տումարից անդորրագիր ստանային։ Ներկայ եղողներից շատերը նոյն րոպէին վճարեցին իրանց բաժինը, բայց մինչ այս, մինչ այն զբաղվեցան չարափաներ, որոնց յաջողվեցաւ մի քանի օրուայ մէջ խափանել այդ ըսկսուածքը։ Դէռ այս բոլորը բաւական չէր։ Հոգևոր բարձրագոյն իշխանութիւնն էլ չէր միաձնից մի պարապ վարդապետի վանական հայր նշանակելով Գիսու վանքին, մինչև ցայսօր այդ վանքից ուսումնարաններին հասնող արդիւնքն էլ մի արտօնագրով թողնէց նրա իրաւասութեանը, յատկացրեց նրա վայելչութեանը.... Ըսկսէս, ուրեմն, հոգաբարձութիւնը ճնշվում է. ուսուցիչները չը կան. աշակերտութիւնը՝ բոլորը ցրուեցան, իսկ աշակերտների երկու երրորդական մասը։ Ժողովուրդը սառն է, հոգևոր իշխանութիւնը առելի անտարբերութեան մէջ, թեմ. վերատեսչը ննջում է և քաղաքի ուսումնարաններին ծեում է միայն մի «հոգոց» ասել։ Քաղաքային ուսումնարանները այսպիսի վիճակի ենթարկված լինելուց յետոյ, երևակայեցէք, թէ ինչ դրութեան մէջ կը լինի մեր գիւղական ուսումնարանը, որ ուսական աշխարհի փրկութեան մի հատիկ յոյսը պէտք է լինէր։ Մեր գաւառն ունէր վեց հատ ուսումնարաններ. այս տարի գրանցից փակվեցան՝ Ղազարաշունը, Ձաւարիկինը, Ռէգլարքեանդրանը և մեր Նիժ գիւղինը, որոնք ոչ մի հատ ուսուցիչ չունեն և ոչ մի տրեցուց, Վարդաշէնում կայ մի տրեցուց, իսկ Կոսխունը,— արդէն տեսաք նրա պատկերը։ Մեր յաջորդը, որ թեմ. վերատեսչի օգնականի առաձիկ էլ է առանում, բարձի թողն արած այդ ամենը՝ այժմ գիւղերումն է և, իրը թէ, կամենում է նորանոր ուսումնարաններ բաց անել և այդ մի այնպիսի ժամանակ, երբ «մաձառները» պարզել և վառիկները մեծացել են արդէն։ Խնդրում ենք հոգևոր իշխանութեանը, որ իր վարդապետներին այլ ևս «չը խառվեցնէ», ապա թէ ոչ միւս անգամ մեր անունն էլ կը քանդվին, իսկ թեմ. տեսուչների համար հնարի մի ազօթք, որով յունիսին ճանապարհվին, յունվարին տեղ հասնին, փետրվարին ժողով կազմին, մարտին կարգադրեն, ապրիլին ուսումնարանները բացվին, նրա համար որ մայիսին կրկին փակին։

Բ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 27

Լուսաւորչականները հալածում են աւետարանականներին։ Ըսկսէ, դա մի անսուտ իրողութիւն է, մի տնուրանալի ճշմարտութիւն։ Գուր են աշխատում գրել, քօղարկել կոյր մոլեռանդները, աչքերը բաց իրանց կոյր ձեռացողները։ Իսկ բնական է, որ ինչտեղ լինի ճնշում, այնտեղ էլ կը լինի հակաճնշում։ Ահա այս է պատճառը, որ աւետարանականութիւնը տարածվում է, ինչպէս և առհասարակ այս է լինում և պատճառ ամեն բանի տարածման։ Մի որ և իցէ սկզբունքների ծառայողներին, քարոզիչներին հալածելը՝ կը նշանակէ ուղիղ ճանապարհ ցոյց տալ այդ սկզբունքների տարածվելուն, այս մի ճշմարտութիւն է։ իսկ ճշմարտութիւնը միշտ ծակող է մոլեռանդների ու կամակորների աչքերը։ Ըսկսէ ֆանատիկներին մեր ասածները ապացուցանելու համար իսկոյն կը դառնամ փաստերի, իրանց ցանկացած ու պահանջած փաստերի։

Արանից 4—5 տարի առաջ աւետարանականութիւնը սկսել էր մուտ գործել և մեր քաղաքը—Երևան։ Իսկ այդ քարոզութիւնը, ինչպէս և միւս չար թէ բարի բաները, մտաւ Երևան Ղզլարճանից՝ այդ վարդապետների այժմեան անկեալոցից։ Մի հիւան Բրզումեան անունով Ղզլարճանից տեղափոխվեց Երևան, ուր և շարունակում էր իր արուեստը ամենայն տեսակ ազնուութեամբ և անսուտ պարզութեամբ։ մի խօսքով պարոնը իր խօսակցութեամբ, իր ձևերով բոլորովին տարբերվում էր լուսաւորչականներից։ Պ. Բրզումեանը չէր գնում եկեղեցի սուտ աղօթելու, չորս կողմի մարդկերին զարմացնելու, իր կեղծ ջերմեռանդութեամբը աչքերը կապելու....

Պ. Բրզումեանը գտաւ իրան հետևողներ, որոնք ժողովվում էին Շահար անուանված թաղում իրանց աղօթքները անելու։ Դրանց հաճախութիւնը, հասարակ ու պարզ վարմունքը, իրար հետ քրիստոնէական սիրով վերաբերվելը փոխանակ զարմացնելու, փոխանակ ազնիւ զգացմունքներ գարթեցնելու, փոխանակ նմանողութեան նախանձ զրգռելու լուսաւորչականների մէջ, ընդհակառակը այդ ամենը զրգռից նրանց հնադարեան մոլեռանդութիւնը։ Լուսաւորչականները նրանց առաջ բերած փաստերից յաղթվելով, նրանց ճշմարիտ խօսքերը արհամարհելով, նրանց ասածներին ուշ չը դարձնելով ձեռ առան մի այլ միջոց.—լուսաւորչականները ամեն տեսակ կեղտոտ բամբասանքներ, մոլեռանդ զրոյցներ, զանազան բռնաբարութիւններ, մի խօսքով կայր նախապաշարմունքներին միայն վայել ամեն տեսակ զգուելի միջոցներ ձեռք առան։ Այս ամենը չընկճից նրանց, այլ ընդհակառակը աւելացնում էր աւետարանականների թիւը։ Լուսաւորչականների կատաղութիւնը վերջին կէսին հասաւ, նրանք սկսեցին դիմել ամենաբարբարոս միջոցների՝ ծեծի ու սպանութեան։

Արձեմ երևանցիք մոռացած չեն լինի, թէ մի օր ինչպէս առանց խղճահարվելու, առանց ամաչելու համարձակվեցին նոյն իսկ արհեստանոցում յարձակվել պ. Բրզումեանի վրա և ամեն միրը մի մի բահ, դագանակ, գերան, կացին, ուրագ վերցրած՝ վրա թափվեցին այդ անպաշտպան արարածի վրա և սկսեցին ծեծել գցել իրանց ոտքերի տակ տրորել, մի խօսքով այնքան ծեծել մինչև մահվան դուռը հասցնել և դեռ սրանով չը բաւականանալով ինչպէս չը սոսկացին իրանց պաշտած Լուսաւորչից, այդ խեղճի վրա զանազան զրպարտութիւններ անել, իբրև կեղտոտ, լրտես, գող և այլ այսպիսի գոյներով վկայութեամբ ներկայացնել իշխանութեան առաջ։

Արձեմ երևանցիք մոռացած չեն լինի, որ այդ անգթից մի քանի օր անցնելուց յետոյ, առաջնակարգ համարված պարոնները, հասատոյր վաճառականները, պատուաւոր քաղաքացիները, մի խօսքով Երևանի քէֆխուշդանները կալ ու կապ արին և մի ուրիշ աւետարանականի, իրանց լեզուով ասեմ—ֆարմասիոն Ըսատուրին, որի ազնուութիւնը, հասկատ և օրինակելի բնաւորութիւնը մինչև նրա աւետարանական դառնալը ամենի համար մի ասելիք էր։ Ասց աւետարանական դառնալուց յետոյ՝ ոտնատակ արին այդ ամենը, մինչև անգամ նրա ազգականները, նրա բարեկամներն էլ հին շտապում մասնակից լինել նորան ծեծելուն։ Ձէ՞ն խղճահարվում, չէ՞ն ամաչում երևանցիք ծերունի Ըսատուրին արտասուքի հեղեղների մէջ տեսնելով...Ըս յոպէին եթէ անասուածականներից ամենասեռնեալը ներկայ լինէր և տեսնէր ալևզարդ Ըսատուրի դրութիւնը՝ անշուշտ կը գթար և կառչաբեր նրան այդ մոլեռանդ ամբոխի-լուսաւորչականների ոտքերի տակից ազատելու։ Ըս՛ո, կրկնում ենք, որ անասուածականը կը խղճար, կը վազէր փրկելու, այն ինչ լուսաւորչականները դեռ շարունակում էին ծեծելը...

Արձեմ երևանցիք մոռացած չեն լինի, որ իրանց որդիքը իրանց ծնողների օրինակին ու խրատներին հետևելով՝ նոյնպէս մոլեռանդաբար էին վարվում այդ խեղճերի հետ։ Վրանի քանի անգամ երեկոյեան ժամերում, աւետարանականների աղօթք անելու ժամանակ, տարեձանկների որտները և քարերի լուսամուտների ապակիներին կըպչելու ահագին շաւիղը ահ ու դողի մէջ է գցել միամիտ աղօթողներին... Դրանք լուսաւորչականների որդիքն էին, ուսումնարանի աշակերտներ, որ զինաւորված որը սրով, որը գաւազանով և որոնք էլ տարձանակներով՝ կատաղաբար թափվել են աւետարանականների ժողովարանի վրա ամենագզուելի մոադրութեամբ...

Նէ այս ամենը անելուց յետոյ լուսաւորչականները դեռ պարծենում էլ էին, դեռ զանազան տեսակ ծաղրանքներ էլ էին կուսակում դրանց գլխին։ Նոյր պ Ըսատուրը, ըստ սովորութեան, իր ջորու վրա նստած գնաց մեսակայ գիւղը իր բարեկամներից մէկի տունը—նա անյայտացաւ ճանապարհին. նա գոհ գնաց լուսաւորչականների մոլեռանդութեանը.... Սրանից յետոյ լուսաւորչականները անամօթաբար ծաղրում էլ էին հանգուցեալին—«ֆարմասիոն Ըսատուրը իր ջորու հետ երկինքն է համբարձել։ Ըս յս խօսքերն են, որ տեղական «Պրասկ» լրագիրը, մոլեռանդ «Մեղու» այդ համշարին, այսօր բերան առած շռայլում է իր թերթի մէջ...

Ասում են, գործում են այս և սորա նմանի կեղտոտ բաներ և աշխատում են այս ու այն թերթի մէջ իրանց արածները ծածկել։ Մեղանում կարծում են, թէ բռնկամի ու ազգական կամ ազգի կեղտերը ծածկելը ազնուութեան ու սիրոյ նշան է։ Միշտ այսպէս կը լինի մեր ժողովրդի գըրութիւնը, քանի որ կոյրերը մեզ կառաջնորդեն։

Ա՛հայ և նախատինք այդպիսի առաջնորդներին....

Վրոյր

ՆԱՄԱԿ ԿԱՐՈՒՑ

—

Նոյեմբերի 1

Յօդուածովս պատասխան կը տամ «Մշակի» 187 համարի մէջ Կարսէն Պօղոս Ռէպուբեան ստորագրութեամբ նամակին։

Ամենամեծ զրպարտութիւն է իրը թէ Երզրումի և Կարսի հայ-կաթոլիկները այդ տեսակ խօսքեր կը լսեն իրենց բարեմիտ կղերներէն թէ՝ «լաւ է վրացի լինել, քան թէ հայ»։ Ըս՛ո ո՞րտեղ է լսել պ. Թղթակիցը, չը գիտեմ։ Պ. Թղթակիցը Երզրումի և Կարսի հայ-կաթոլիկաց բարոյական կեանքի վրա առանց սադ տեղեկութիւն ունենալու, շեղ դատողութիւններով լցրել է իր նամակը, և ելեր է մեր հոգևորականներուն դէմ պատարակել։

Ա՛նա պէտք է լաւ քննէր խնդիրը և համոզվեր թէ Երզրումի և Կարսի հայ-կաթոլիկները այնքան պինդ հաստատութեամբ իրենք գիրենք հայ ազգի կարգը կը դասեն, որչափ ինքը զանազ կրօնամոլ կարծեր է. մեր անուսում ժողովրդի մէջ նշմարելի է միշտ իրենց նոր սերունդին ազգային ուսումն տալու պարտապատշաճ եռանդը։

Ա՛նա որ կը կամենայ ազգի օգտին մտածել, բնաւին ձեռք չի երկնցներ իր ազգակից կրօնական ներքին փափուկ հարցմունքին վրդովելու։ Ըրիք է թէ՝ իր ազգակիցը ինքզինքը հայ ազգ անուանէ, իր ազգութիւնը չի մոռանայ, և երբ պէտքն զգացուի իրր ազգ գործէ ու թո՛ղ ինչ կրօնքին և ինչպէս կը կամենայ ծառայէ։ Ո՞ւր կ'ուզէ ասել պ. Թղթակիցը. ջնջուիր հայ ըլլալը հաստատ ապացոյցը միթէ՞ միմիայն խարըսիւն չը գնելով լուսաւորչական եկեղեցին մտնելու, կամ շինվածքի տեսութեան յաձախելու մէջ կը կայանայ։ Ով կը ներէ պարոնը, գուցէ ,,Մեղուին,, հետևել կ'ուզէ. բայց թող գիտենայ որ եթէ կրօնական յարաբերութիւնները արգելակ, կամ ըստ ներքին համոզմանց մեզանչական բան չը լինէին, արդէն իսկ ազգիս մի մասը հայ-լուսաւորչական, միւսը հայ-կաթոլիկ, մի ուրիշը հայ-բողոքական և չորրորդը հայ-մահմետական չէին լինիր, և ինքն ալ վիճաբանութեան առիթ չէր հանդիսանար։

Ընդն ասրելը հեշտ է շատ, իսկ չինելը շատ դժուար է. կը վատահացնեմ որ՝ մեր ժողովուրդը, բարեբաղդաբար, չունի երբէք իրեն արիւնակից եղբորց հետ այն տեսլութիւնը, որը Թղթակցի շարադրանքով լոյս է տեսեր։ Եթէ լինէր, ո՛վ կրսէ թէ չը կար Կարսի մէջ գրիչ, որ մինչ ցայժմ առ մի հրատարակել կարողանար, չէ թէ իրեն շնորհ բերելուն սպասէին։ Պէտք էր ցոյց տար պարոնը, թէ ո՞ր բանով առանց յարաբերութեան ենք մնացել մեր եղբայրազգայնոց հետ, մինչդեռ քանի անգամ Ա՛նի սովից նպաստի հանգանակութեան մէջ առանց կաթոլիկ բառը յարելու, մեր պարզևատուներու ստորագրութիւնը կարգացվեցաւ ,,Մշակի,, համարների մէջ հայ-լուսաւորչականաց հետ խառն, մինչդեռ կը գտնուին և աշակերտիք մեր ժողովրդի աղջիկներէն հայ-լուսաւորչականաց օթերդաց ուսումնարանում առանց խարըսիւնի, մինչդեռ առանց պարտի գիտութեան պակաս չեն նաև այլ և այլ ազգային յարաբերութիւններ և ներքին համաձայնութիւն երբ անկ է եղած և կը լինի։

Հարկ տուած է պարտը ինձ որ՝ համարձակիմ մինչև անգամ պատասխանելու թէ՝ այն ալ շատ կղերի պարտքը չէ բնաւին հասկացնել ժողովրդին, թէ՝ ինչ գանազանութիւն կայ կրօնի և ազգութեան մէջ, նկատելով որ՝ բեմերը դեռ վաղ է գանազ վարժատան աթոռ Բաֆֆիի մեր հաձելի ,,Խնդիր,, երազածին պէս։

Ա՛պա ի՞նչ հետևեցաւ մեր կրօնակից պարոնի աննախանձելի թղթակցութենէն, եթէ ոչ հասկացնել իր տեսլութիւնը դէպի իր կրօնը, թեև իր ներքին համոզմունքին ոչ ոք չի խառնուիր. բաւ է որ նոյ ազգին պատկանող լինի՝ առանց ուրիշ մի որ և է հայ ազգայինի մը կրօնական ըղգացմունքը վայրացնելու։

Բարութիւն Գասէն